



Հասարայան - Մինասյան հիմնադրամի՝ Արվեստի գործերի ստեղծման դրամաշնորհային ծրագրի մասնակցության պայմաններ

Հասարայան - Մինասյան հիմնադրամը հայտարարում է դրամաշնորհային ծրագրերի մրցույթ՝ վիզուալ արվեստի ոլորտում ստեղծագործությունների ստեղծման համար:

Ծրագրի նպատակն է՝

- Աջակցել արվեստի նոր գործերի ստեղծմանը :
- Խթանել արվեստագետների ստեղծագործական ներուժը:
- Նպաստել Հայաստանի ժամանակակից արվեստի դաշտի զարգացմանը:

Թեման - **Ճգնաժամ / Crisis**

Ճգնաժամ հասկացությունը գալիս է հին հունարեն՝ *κρίσις* — *կրիզիս* բառից, որը թարգմանանաբար նշանակում է՝ *որոշում, շրջադարձային կետ*:

Նոր հազարամյակում մարդկությունը անընդհատ գտնվում է քաղաքական, տնտեսական, բնապահպանական, հոգեբանական, ստեղծագործական ճգնաժամների և դրանց հաղթահարման փակ շրջանի մեջ:

Ճգնաժամային պայմաններում արվեստագետի գոյատևումը, նրա ստեղծագործականությունը շատ բանով կախված է այն հանգամանքից, թե կարողանում է նա վստահել իր ուժերին, իր ներքին հնարավորություններին և դիտարկել ճգնաժամը որպես *շրջադարձային կետ*:

Մասնակցության պայմանները՝

- Մրցույթին կարող են մասնակցել ժամանակակից վիզուալ արվեստի՝ կերպարվեստի, քանդակի, լուսանկարչության, ինստալյացիայի, հանրային արվեստի, վիդեոարվեստի ոլորտներում տարբեր միջոցներով աշխատող արվեստագետներ և արվեստային խմբեր:
- Մրցույթին կարող են միայն այն արվեստագետները, որոնք ՀՀ քաղաքացի են, իսկ արվեստային խմբերում՝ մեկի ՀՀ քաղաքացիությունը պարտադիր է:
- Դրամաշնորհի չափն ու տրամադրման կարգը
- Տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է **2.500.000** (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:
- Ֆինանսական օգնությունը տրվում է միմիայն այն ծախսերի համար, որոնք անհրաժեշտ են արվեստի գործը ստեղծելու համար:
- Մասնակցության համար անհրաժեշտ է լրացնել հիմնադրամի կողմից առաջարկվող հայտադիմումի ձևը:
- Հեռ.: **+37493581590**



- Էլ.հասցե: info@hmf.am
- Կայք: www.hmf.am
- Առաջնահերթություն կտրվի այն նախագծերին, որոնք կհամապատասխանեն առաջարկվող թեմային և կնպաստեն արվեստագետի ստեղծագործական զարգացմանը:
- Համաֆինանսավորումը ողջունելի է:

Պրամաշնորհի տրամադրման ժամկետները և վճարման կարգը`

- Ֆինանսական օգնության դրամաշնորհը տրվում է վեց ամսվա կտրվածքով, որի վերաբերյալ նշված է հայտադիմումում (դիմորդ/ները սահմանում են նախագծի մեկնարկն ու ավարտը): Արվեստի գործի ստեղծումը պետք է ավարտվի նշված ժամկետում:
- ՄիՆասյան - ՀասարակաՆ հիմնադրամի տրամադրած դրամաշնորհով ստեղծված արվեստի գործը կամ նախագիծը ներկայացնելիս` արվեստագետները պետք է ներառեն հիմնադրամի անունը և լոգոն բոլոր հետագա հրատարակություններում, ցուցադրություններում կամ այլ միջոցառումներում:
- Ստեղծված արվեստի գործերը հանդիսանում են արվեստագետի սեփականությունը, սակայն, վաճառելու դեպքում` պարտավոր է առաջին հերթին առաջարկել հիմնադրամին:
- Ֆինանսական օգնությունը տրամադրվում է երեք փուլով, տոկոսային հարաբերակցությունը կարգավորվում է պայմանագրով:

Հայտադիմումների ժամանակացույցը`

- Մրցույթը հայտարարվելու է տարեկան երկու անգամ
- Առաջին մրցույթ - մայիս 1, 2019թ .:
- Հայտադիմումները ներկայացնելու վերջնաժամկետը` հուլիս 15, 2019թ .:
- Ընտրությունը և հաղթող հայտադիմումների հայտարարումը` օգոստոս 15, 2019թ.
- Լրացված հայտադիմումները (հայերեն) ուղարկվում են հիմնադրամի էլեկտրոնային հասցեին` grants@hmf.am
- Հայտադիմումները պետք է համապատասխանեն մրցույթի չափանիշներին և թեմային: